20.05.2014թ.

Արձանագրություն

Հաշմանդամություն ունեցող անձանց հարցերով զբաղվող << Արմավիրի մարզային հանձնաժողովի նիստի

Մասնակցում էին Հանձնաժողովի անդամները, շահառու ունեցող հասարակական կազմակերպությունների նախագահները, ''Զբաղվածության պետական ծառայություն'' գործակալության Արմավիրի մարզային կենտրոնի տնօրեն Վ.Ասատրյանը:

Օրակարգում՝

Մարզի զբաղվածության տարածքային կենտրոններում հաշմանդամություն ունեցող անձանց հետ իրականացվող պետական ծրագրերի ընդգրկվածության քննարկում:

/Զեկուցող Վ.Ասատրյան/

Բացելով նիստը տիկին Մուրադյանը ներկաներին ծանոթացրեց նորաստեղծ ''Արևի շող'' հասարակական կազմակերպությանը, որը զբաղվում է հաշմանդամություն ունեցող անձանց խնդիրներով և ցանկացավ բեղմնավոր աշխատանք: Միաժամանակ առաջարկեց ներկա գտնվող ՀԿ-ներին՝ փոխհամագործակցել, ինչպես նաև օգնել նրանց աշխատանքային փորձի փոխանակման աջակցելու հարցում:

''Զբաղվածության պետական ծառայություն'' գործակալության Արմավիրի մարզային կենտրոնի տնօրեն Վ.Ասատրյանը խոսեց նախորդ տարում կատարված աշխատանքների մասին, ներկայացրեց զբաղվածության պետական բոլոր ծրագրերը, որոնք վերաբերում են հաշմանդամներին: Տեղեկացրեց գործընթացներին, սկսած գործակալություն դիմելու, հաշվառվելու, ինչպես նաև ծրագրերի ընտրության հնարավորություններին: Այդ կապակցությամբ դիմելով հանձնաժողովի անդամներին, և հասարակական կազմակերպություններին, առաջարկեց մարզխորհրդի նիստերում տեղեկացնել համայնքների ղեկավարներին իրենց համայնքներում բնակվող հաշմանդամներին իրազեկելու, ուղղորդելու, դիմելու զբաղվածության

կենտրոններ՝ հաշվառվելու և համապատասխան ծրագրերում ընդգրկվելու համար: Քննարկման արդյունքում ծագած հարցերին տրվեցին սպառիչ պատասխաններ: Ամփոփելով նիստը տիկին Մուրադյանը դիմեց հասարակական կազմակերպություններին և աշխատակազմի երեխաների իրավունքների բաժնին, ասելով, որ հունիսի 1-ին Երեխաների պաշտպանության օրվա կապակցությամբ նախատեսված /հատկապես հաշմանդամություն ունեցող երեխաներին վերաբերող/ միջոցառումները լուսաբանվեն ՁԼՄ-ներով:

ՄԱՐԶՊԵՏԻ ՏԵՂԱԿԱԼ Լ.ՄՈՒՐԱԴՅԱՆ

Արձանագրող՝ Ծ. Գրիգորյան